

Հարցազրույց՝ Օրսֆորտ Համալսարանի դասախոս Գեղա Հրաչ Զիլինկիրեանի հետ

ԿԱՐԵՒՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՒՆՆԵՐ

Մերձադար Արևելքի քրիստոնեությունն առջև ծառայած երկու հիմնական խնդիրներն են՝ անվտանգությունն ու զարթոնումը

«Արորա երկխոսություններ-2017» նախագծի ծիրեն ներս՝ «Պատերազմները, կրօնական ծայրայեղությունները և ապագային սպասուող մարտահրավերները Մերձադար Արևելքի մեջ Արևելեան Քրիստոնեության համար» թեմայով վերջերս, Երեւանի Պետական համալսարանին մեջ դասախոսություն ունեցաւ ծանօթ գիտնական, Օրսֆորտ համալսարանի դասախոս Հրաչ Զիլինկիրեան:



Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան խօսեցաւ այն կարեւոր մարտահրավերներուն մասին, որոնք այսօր ծառայած են քրիստոնեայ համայնքներուն առջև: Մերձադար Արևելքի մեջ ընթացող պատերազմներուն, կրօնական ծայրայեղություններուն, միջհամայնքային հակամարտություններուն, ցեղասպանության, ընկերային-տնտեսական անկման և բնակչության գաղթին և տեղաշարժներուն համատեքին վրայ: Հրաչ Զիլինկիրեան հանդիպումներ և ելույթներ ունեցաւ նաև Արցախի մեջ, ուրիշ վերադարձին Երեւանի մեջ պատասխանեց «Մամանակ»-ի հարցումներուն:

գուրեան հարցէն, զարթոնականությունն է, տեղաշարժներն ու տեղափոխությունները: Վերջին տասը տարիներու ընթացքին հսկայական արտագաղթ եղած է և տակալին կը շարունակուի: Օրինակ, Բրաքի մեջ մէկ միլիոնէ աւելի քրիստոնեաներ արդէն երկիրը լքած են: Պատերազմէն առաջ Բրաքի մեջ կար մօտ մէկ միլիոն երեք հարիւր հազար քրիստոնեայ, այսօր հազիւ երկու-երեք հարիւր հազար մնացած է ամբողջ Բրաքի մեջ: Թիւերու առումով նոյն նուազումն է նաև ուրիշ երկիրներու մեջ:

- Այսօր Միջին Արևելքը, ուր տեղի ունեցող խնդիրներուն մասին խօսեցաք, աշխարհի թե՛ կէ տը կը սեպեք, որուն վրայ «կը բարայտ» աշխարհի սիրտը:

- Այո, և այդ տարածաշրջանին առնչուող իմ ուսումնասիրություններու հիմնական կեդրոնը քրիստոնեայ համայնքներն ու ոչ-իսլամ փոքրամասնություններն են: Եւ եթէ աչք ընդ նետներ այս վերջին տարիներուն տեղի ունեցող պատերազմներուն, իրադարձություններուն, լուրջ խնդիրներ դրուած են քրիստոնեայ համայնքներուն առջև: Գաղտնիք չէ, որ քրիստոնեայ համայնքները կը օտարանան ընդհանրապէս Մերձադար Արևելքի մեջ: Անշուշտ, ևս այն կարծիքին չեմ, որ լրիւ պիտի վերանան այդ համայնքները:

- Բայց յաճախ լուրեր կը տարածուին, որ յատուկ նպատակ մը կ'այ Մերձադար Արևելքի մեջ քրիստոնեությունը բնաջնջելու, այդ մասին ի՞նչ կըսեք:

- Ես չէի ըսեր յատուկ քաղաքականություն է: Անշուշտ, իսլամական ծայրայեղությունը իր գաղափարախօսության մեջ ունի Միջին Արևելքը մաքրել ոչ-իսլամական տարրերէ, այդ իմաստով իրենց գաղափարախօսական կամ «աստուածաբանական» բացատրության մեջ այդ մէկը կ'այ: Բայց չեմ կարծեր, որ այդպէս ծրագրուած բան մըն է, և պետություններ նստած և ծրագրած են քրիստոնեությունը ի սպաս վերացնել: Անշուշտ, վտանգ եղած է և տակալին կ'այ:

Այսօր երկու հիմնական խնդիր կ'այ Մերձադար Արևելքի քրիստոնեության առջև: Առաջինը պապահովությանն է անվտանգության խնդիրն է: Եւ այստեղ, ըստ գոնէ իմ ուսումնասիրություններուս, անպապահովության հիմնական երեք մակարդակներ կան. մէկը ֆիզիքական ապահովության, անվտանգության խնդիրն է: Մարդիկ գոյությունն ունին պիտեղ ռուսներու, կրակոցներու տակ անոնք պէտք է իրենց կեանքը ապահովեն կամ փրկեն:

Անպապահովության երկրորդ մակարդակին վրայ կ'այ ընկերային-տնտեսական ապահովության խնդիրը: Այսինքն այս պատերազմները, բախումները վերջին վեց-եօթը տարիներու ընթացքին այնպիսի իրավիճակ մը ստեղծած են, որ տնտեսությունները մասնաւանդ Սուրիոյ և Բրաքի մեջ լրիւ անկումի մեջ են, մարդիկ աշխատանք չունին, գործատէղիներ կորուսած են, եկամուտի աղբիւրները չքացած են և այլն, և այլն:

Բակ երրորդը, որ քիչ մը աւելի երկարաժամկետ ապահովության խնդիր է, այն ալ մշակութի և կրօնքի անվտանգության խնդիրն է: Այսինքն այդ տարածաշրջանին մեջ, մասնաւանդ իսլամական ծայրայեղության պարունակին մեջ նաև լուրջ խնդիր է կրօնական ազատության հարցը, և փոքրամասնությունները, մասնաւանդ քրիստոնեաները իրենց հաւատքը, կրօնքն ու մշակութայն պահպանելու և ազատօրէն գործածելու անմիջական հարց ունին: Ապահովական այս հարցերն են, որ այսօր կը դիմագրաւէ Մերձադար Արևելքի քրիստոնեայ բնակչությունը:

Միւս երկրորդ խնդիրը, որ կը բխի այս անվտանգ

- Բակ տարածաշրջանին մեջ հայության տեղաշարժներուն և գաղթին մասին ի՞նչ տուեալներ կան:

- Ես փոքրիկ ուսումնասիրություն մը ըրած եմ, և եթէ բաղդատներ անցնող բառաստուն տարիներու հետ թիւերը, կը տեսնեք, որ հայ համայնքները Մերձադար Արևելքի մեջ, վաթսուներեք տոկոսէ աւելի նուազած են: Այսօր Մերձադար Արևելքի մօտ տասը երկրի մեջ, ուր մեծ թիւով հայ համայնքներ կ'ային, հազիւ մնացած է մօտ երկու հարիւր յիսուն հազար հայություն, ներառեալ Բրաքն, Լիբանանը, Սուրիան, Բրաքը, Եգիպտոսը, նաև Թուրքիան, եթէ Միջին Արևելքը նկատի առնենք քիչ մը լայն իմաստով: Երեւակայեցեք, եօթնաստուականներուն, որ հայությունը վեց հարիւր յիսուն - եօթը հարիւր հազար էր, հիմա մօտ երկու հարիւր յիսուն հազար է միայն:

- Այս տեղաշարժներուն պատճառով այդ մարդոցմէ շատ քիչներուն հայեացքը կըտղուի դէպի հայրենիք, այլ երկիրներ կերթան անոնք, այդ ալ ուրիշ մտանոցիչ հարց մըն է, քանի որ Հայաստանը այսօր ունի ժողովրդագրական խնդիր, և լաւ կըլլայ, որ անոնք Հայաստան գալին, որպէսզի այդ հարցն ալ ձեռով մը լուծուի:

- Այս մէկը լուրջ հարց է: Անշուշտ, ցանկալի է, որ մանաւանդ Միջին Արևելքի մարդիկ Հայաստան գան, որովհետեւ նախ մշակութային, միջավայրի և այլ նմանություններ գոյություն ունին, նոյնիսկ աշխարհագրական մօտիկությունը կրնայ դեր խաղալ: Բայց քանի որ, ռեւէ գաղթական նախ իր ամէնօրեայ մտահոգություններն ունի, իր ու ընտանիքին ամէնօրեայ պէտքերը հայրապետու անմիջական հարցն ունի, ուրեմն, տեղ մը պիտի երթայ, ուր ինք կրնայ գտնուր ապահովել, պահել իր զաւակներն ու ընտանիքը: Հայաստանը այսօր, այո, մենք կը ներկայացնենք որպէս մեր ինքնութեան կարեւոր մէկ մասը, կառաջարկեմք մարդոց, որ գան Հայաստան, ձեռով մը փորձելով անոնց հայրենասիրական զգացումներուն դիմել, բայց միւս կողմէ եթէ անոր առընթեր այդ մարդուն, այդ հայուն որ գաղթական է, ամենահասարակ պայմանները չենք կրնար ապահովել, ուրեմն այդ մարդը թերեւս իր խոզով, սրտով կ'ուզէ Հայաստան գալ, բայց հնարաւորությունները այստեղ բարարք չեն, ըսենք տուն վարձելու դրամ չունի, իր ասպարէզին մեջ աշխատանք գտնելու հնարաւորություն չունի և այլն, ուրեմն Հայաստան պիտի գայ, ի՞նչ պիտի ընէ: Եթէ գայ, թերեւս ինքզինքը նոյն վիճակին մեջ կը պատկերացնէ, ինչպէս որ էր իր երկրին մեջ, ուրիշ նաև այս հարցերուն պատճառով գաղթած է: Այս հարցը շատ աւելի բարդ է, քան մենք մեր ազգային քննարկումներուն մեջ կը պատկերացնենք: ... Պաշտօնական տուեալներով Հայաստանի մեջ ինչ հարիւր հազար արքայ կ'այ, այս մէկը պաշտօնական տուեալն է, թերեւս աւելի է թիւը: Ուրեմն, ձեռով մը կանգնած ենք խաչներու կի մը առջև: Եթէ Միջին Արևելքէն եկած գաղթականներուն պիտի օգնենք, ժողովուրդը կ'ըսէ մենք ալ հոս նոյն խնդիրները ունինք, ինչպէս մեզի չէր օգնէր...

- Ինչպէ՞ս կը պատկերացնէք այս հարցերուն լուծումը:

- Այսօր մենք աշխարհի մը մեջ կ'ապրինք, ուր պէտք է բազմակողմանի աշխատանք տանինք, բազում ուղղություններով մտածենք: Այնպէս չէ, որ Հայաստանի բոլոր խնդիրները պէտք է լուծենք, յետոյ սկսիք Սփիւքի կամ հայ գաղթականներու մասին մտածել: Ուրեմն, զուգահեռ, նոյնիսկ բազմակողմանի նայելով է, որ այս բոլոր հարցերուն լուծում պէտք է տրուի:

- Բակ գարով Մերձադար Արևելքի տեղաշարժներուն

Շար. էջ 14



Գիմնուած 1922-ին (Ֆրեզնո)
Established 1922 (in Fresno)

ՊԱՇՏՆԱԿԵՐԹ
ՈԱՄԿԱՎԱՐ ԱԶՆԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՄԻԱՅԵՒՆ ԱՆՎԱՆՈՒՄԵՐՈՒ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ

An ADLP Publication

ԽՍՐԱԳԻՐ
Գրաչ Սեփեթճեան

ԳԼՍԱՒՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ
Դոկտ. Միմաս Գոճայեան
Խաչիկ Ճանոյեան
Յակոբ Մարտիրոսեան
Սարգիս Յ. Սիմանեան

ՄԱՐԶԱԿԱՆ ԱԲԺԻՆ
Անտիոս Բայրամեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՆԱՄԱՏՈՒ
Ստեփան Փարթամեան

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒ
Մատլեն Թապազեան

Դեռածայն (626) 296-2921
Դեռատիպ (626) 296-2922

e-mail:
խմբագիր՝ editor@noror.org

Անգլերէն Բաժին՝ english@noror.org

Քարտուղարութիւն՝ info@noror.org

Բաժանորդագրութիւն՝
subscription@noror.org

Անուարկական Բաժին՝
advertising@noror.org

www.noror.org

Պատեմելով ռամկավարական սկզբունքներու, կը հաւատանք բազմակարծութեան և ազատ խօսքի իրաւունքին. հետեւաբար, իրապարակած գրութիւնները անպայման չենք արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Խմբագրութեան կը վերապահուի յոյսած յօդուածներուն յապարտմանը կամ չիրատարակելու իրաւաստութիւնը:

Nor Or Weekly
Nor Or Publishing Association, Inc.
1901 N. Allen Ave.,
Altadena, CA 91001
U.S.A.

2nd Class: West Coast \$75
2nd Class: East Coast \$85
1st Class: West Coast, East Coast \$120
Canada Air Mail: \$130
All Other Countries
Air Mail: \$250

© 1922-2017 Nor Or Weekly

Mail Postage Paid at Altadena, CA.
& Additional office,
USPS: 391-380 - ISSN: 0029-1161

POSTMASTER:
Send address changes to
Nor Or Publishing Association, Inc.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՅԱԿՈԲ (ԺԱԲ) ՓԻԱՆՏԱՐԵԱՆ



Հանգուցեալ Յակոբ (Ժաբ) Փիանտարեանի մահուան 2-րդ տարեիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յուլիս 2017ին, Փաստիկայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, 2015 E. Colorado Blvd., յաւարտ Ս. Պատարագի:

Մզակիրներ Եւրոպր Պետրոս եւ Անն Փիանտարեան եւ դուստր Ալիսըն Ազատ
Քոյր Անահիտ Փիանտարեան Եւրոպր գաւակը Լիզ Անի եւ Պրայն (ամուսինը) Շիբ Քրոջ գաւակը Նրանդ Մաւնատ (Աղէքսանդրիա)
Հարգատեսները, բարեկամներն ու զաւգափարի ընկերները:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեւորձ պիտի մատուցուի եկեղեցոյ «Կիրակոս» սրահին մէջ:

ԿԱՐԵՒՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ...

Շար. էջ 2-էն
ինչպէ՛ս կը պատկերացնէր այսպէս, ինչպէ՛ս կը դիտարկէր այդ անորոշութիւնը, մանաւանդ որոշ գերտերութիւններու ղեկավարներ փոխուած են, եւ կը թուի, թէ որոշակի բան մը պիտի ըլլայ:

- Նախ քան, որ Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը ընդհանրապէս արեւմտեան երկիրներու օրակարգին մէջ ալ չի յիշուիր: Այսպէս ըսենք՝ արեւմտեան պետական կամ հասարակութիւններու տեսադաշտին մէջ չեն գտնուիր: Երբ Միջին Արեւելք կը ըստ մարդիկ անմիջապէս կը մտածեն ահաբեկչութեան մասին, «Բալանական պետութեան» մասին, բայց ոչ որ կը մտածէ, որ Միջին Արեւելքը քրիստոնէութեան օրրան է, այնտեղ ճանձ է քրիստոնէութիւնը, եւ այնտեղ է, որ հին արմատներ ունի եւ այդ արմատները այսօր մերթ ընդ մերթ կը տկարանան:

Ինչ կը վերաբերի այսպէս, անորոշ է, բայց եւ այն կարծիքին չէմ, որ քրիստոնէութենէ լրի պիտի պարպուին այդ երկիրները: Յստակ է, որ եկող տասնամեակներուն թուային իմաստով շատ աւելի փոքր համայնքներ պիտի ըլլան այնտեղ: Յատկապէս մեր պարագային՝ հաւանաբար հայկական համայնքները շատ աւելի փոքր պիտի ըլլան:

- Իսկ մարդուր, որ տարբեր երկիրներ կերթայ, իր դրական ազդեցութիւնը կունենայ՝ այդ երկիրներուն մէջ, մանաւանդ, որ մեր այդ երկիրներու հայրենեան մասին գիտենք, որ աշխատող են, շէնցող են, ուր որ երթան, ինքզինքնին կը փաստեն եւ այդպէս եղած է դարերու ընթացքին:
- Շեռաքրքրական հարցում մըն է,

որուն կրնանք թէ՛ դրական, թէ՛ ժխտական ձեւով նայի: Պատմութեան ընթացքին ալ, երբ Հայաստանը տկար եղած է եւ անկումի մէջ գտնուած է, ուրիշ գաղութներ սփիւռքի մէջ ծաղկած են: Օրինակ, Անիի կործանումէն յետոյ, Եգիպտոսի մէջ ձեւաւորուած է ծաղկուն հայկական համայնք մը: Ուրեմն, երբ գաղութ մը արտագաղթ կայ, ուր որ ուղղուի արտագաղթի հոսքը, այնտեղ կը շարունակուի կամ կը վերականգնի համայնքային կեանքը: Այսօր վստահ Քաննատայի մէջ սփիւռքահայերը ձեւով մը նոր շունչ տարած են հայ համայնքին, օրինակ, հայկական դպրոցներուն մէջ կրնան Հալէպէն գացած ուսուցիչներ աշխատիլ եւ այլն: Առիթալ դրական բան մըն է, իսկ երկրորդ խնդիրը այն է, որ եթէ սփիւռք երեսփոխ տեսանկիւնէն նայինք, Լիբանան, Սուրիա կամ Մոնթթրէալ, նորէն սփիւռքի մասին է խօսքը: Այսինքն աշխարհագրական տարբերութիւնը կայ, բայց բովանդակութեան, իրականութեան առումով կը մնայ սփիւռքեան իրականութիւնը: Անշուշտ, այնտեղ կան նրբութիւններ. Միջին Արեւելքի մէջ հայերը լաւապէս պահպանած են լեզուն եւ մշակոյթը, այն ալ, որովհետեւ կապրին իբրէ քրիստոնէայ փոքրամասնութիւն իսլամ երկիրներու մէջ: Իսկ Արեւմուտքի մէջ տարբեր է, բայց սփիւռքը սփիւռք է:

Ուրիշ հարց մըն ալ, որուն մասին վերջերս սկսաւ մտածել, հիմա կայ սփիւռքին սփիւռքը՝ Հայաստանի մէջ: Այսինքն, սփիւռքահայեր, որոնք եկած են Հայաստան եւ երկար տարիներ հոս կապրին, ձեւով մը «սփիւռք» մըն են Հայաստանի մէջ, որովհետեւ անոնք ընդհանրապէս Հայաստանի հասարակութեան

կողմէ կը դիտուին որպէս սփիւռքահայեր, ոչ թէ իբր համաքաղաքացիներ, եւ անոնք կրկին կը մնան սփիւռք, այս անգամ՝ հայրենիքի մէջ: Եւ ունինք նաեւ միւս երկուսը՝ Հայաստանի սփիւռքը՝ սփիւռքի մէջ: Այս հարցերը ուսումնասիրութեան նիւթեր են, որոնք կրնան դրկտորականի լաւ եւիթ դառնայ:

- Ինչն է պատճառը, որ հայեր, այս կամ այն երկրին մէջ ապրելով է Հայաստանը այնքան ալ գրախչապրելու միջավայր չեն կարողացել, իրենց միտքին մէջ անկիւնը անպայման ունին Հայաստանը: Արդեօք հայրենիքի ո՛ւմն է այդ մէկը, թէ՛ ուրիշ պատճառ մըն է ալ կայ:

- Անշուշտ, հայրենիքի ումն ալ կայ: Իբրեւ ընկերաբան իմ մտեցումս այն է, որ երբ դուն կերթաս ուրիշ երկիր մը, միշտ այդ երկրի հասարակութիւնը պայման չէ, որ թե՛ ընդունի իբրեւ իր մէկ մասնիկը, դուն միշտ դրսեցի ես, միշտ օտար ես, կրնաս այդ երկրին անձնագիրը ունենալ, բայց խօսքիդ մէջ օտար շեշտ մը կայ, մտքիդ գոյնը թիչ մը թուիս է, եւ այլն: Եւ որովհետեւ այդ «օտարութիւնը» կայ, դուն կը գզաս, որ քու արմատը Հայաստանն է, հայրենիքն է: Սփիւռքը իր գագաւտով իր հաւաքական երեւակայութեան մէջ հայրենիքի գաղափարը պահեր է, իբրեւ իր գոյութեան աղբիւրը ստեղծելով իր երեւակայական հայրենիքը: Անշուշտ, Հայաստանին հակելու, պատճառներն են նաեւ մշակոյթն ու լեզուն, եւ Հայաստանը ի վերջոյ այդ բոլորին աղբիւրն է, որ մեզի կեանք է դարձրել ի վեր:

Յապաւումներով

ՏԱՌԻՇ ԹՐՈՒՄՑ

«Մասնակ»
Բթթնապոյ, 22 Յուլիս 2017

ԱՄՆԻ ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան...

Շար. էջ 12-էն
նախարարութեան շնորհակալագրով: Ֆիրդուս Զարբաբեանը վարժարանի տնօրէն Արփի Աւանեսեանին յանձնեց շնորհակալագիրը:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար վարժարանի տնօրէն Արփի Աւանեսեանը հաւատարմացրեց, որ երեխաները սիրով և մեծ պատասխանատուութեամբ են վերաբերուում Հայրենիքին և իրենց հայրենակիցներին օգնելու գործին:

«1976թ. հիմնադրուած վարժարանն այսօր ունի 700 աշակերտ: Մեզ մօտ դասասանդումն է նաև հայոց լեզու, գրականութիւն, մշակոյթ, պատմութիւն, կրօնք, երաժշտութիւն, գործում են հայկական պարի, շախմատի խմբակներ: Ինչպէս ամեն տարի, այս տարի նս մեր վարժարանի սաներն իրենց երկշաբթեայ հանգիստն են անցկացնում Հայաստանում՝ այցելելով հայրենիքի տեսարժան վայրեր: Մենք ամեն բան անում ենք, որ մեր սաներն ամենափոքր տարիքից ճանաչեն և սիրեն հայոց լեզուն, Հայրենիքը և իրենց գաւակներին փոխանցեն մեր Ոսկէրեմիկ Մայրենին», սասց Արփի Աւանեսեանը:

Այնուհետև վարժարանի տնօրէնը սաների մասնակցութեամբ հանդիպմանը մասնակից սիրահայ ընտանիքների ներկայացուցիչներին յանձնեց հաւարուած գումարները:
Շնորհակալութեամբ ընդունելով

օգնութիւնը՝ սիրահայ ընտանիքների ներկայացուցիչները նշեցին, որ արդէն 5 տարի Հայաստանում են, հիմնադրուել են Հայրենիքում, իրենց այստեղ ապահով ու անվտանգ են գտնւում և չեն պատրաստուում հեռանալ երկրից:

Նրանք հաւաստիացրին, որ հեռուտը ափերում ուղարկ իրենց հայրենակիցների ուշադրութիւնն ու օգնելու պատրաստակամութիւնն է՝ աւելի է յուսադրում, Հայաստանում ապրելու և Հայրենիքը շենացնելու ուժ ու կորով է հաղորդում իրենց:

Վարժարանի ուսուցիչ, նաև «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի տնօրէն Յովհաննէս սարկլաւազ Գումրուեանն ընդգծեց. «Մենք մեր բոլոր նախաձեռնութիւններում մշտապէս գտնւում ենք ՀՀ սփիւռքի նախարարութեան և նախարար Նրանուշ Յակոբեանի անմիջական և գործուն աջակցութիւնը: Դա ուժ և ոգևորութիւն է մեզ հաղորդում նորանոր ծրագրեր իրականացնելու համար»:

Հանդիպման աւարտին ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի սաները հաւաստիացրին, որ այսօրինակ նախաձեռնութիւնները շարունակական են լինելու, եկող տարի նոյնպէս կը գան Հայրենիք և իրենց օգնութիւնը կը բերեն առաւել կարիքաւոր հայ ընտանիքներին:

ՀՀ ՍՓԻՒՈՔԻ ԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մահազ Յակոբ Ճազմատարեան 1959-2017

Երեքշաբթի, 27 Յուլիս 2017ին մեզմէ հեռացաւ Յակոբ Ճազմատարեան, խոր սուգի մատնելով իր ընտանիքը եւ ՀԲԸՄի մեծ ընտանիքը:



Յակոբ, տասնամեակներ շարունակ եղած է աշխոյժ միութենական, փոքր տարիքէն մաս կազմելով ՀԲԸՄի եւ ՀԵՇԻ տարբեր յանձնախումբերու: Ան մեծ ներդրում ունեցած է Փաստիկա-Կլենտլի մասնաճիւղէն ներս՝ սկսատարիին, Young Professionals, Generation Next: Ան մաս կազմած է նաեւ ՀԲԸՄ Արեւմտեան Ամերիկայի Երջանակային Յանձնաժողովին, ստանձնելով գանձապահի պատասխանատու պաշտօնը:

Յուղարկարութիւնը եւ թաղումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 3 Յուլիս 2017ին, առաւօտեան ժամը 9:00ին, Hollywood Hills-ի Forest Lawn Old North Church-ին մէջ:

Մեր ցաւակցութիւնները հանգուցեալի տիկնոջ՝ Նինային, դստեր՝ Լորային եւ համայն հարազատներուն:

Պատգամ՝ ազատամարտիկին

Բաւ չէ լինել միայն տոկուն, Պետք է լինել նաեւ ճկուն, Թէ կարող ես առջը անցիր, Եթէ հարկ է դէ նահանջիր. Գոյամարտի սասպարեզում Կտուրի անդուլ ու անդադրում:

Կարօտ

Ուրախ լինեն, թէ գլխահակ, Մարդկանց միջեւ, թէ միայնակ, Անուրջներում, ոճալ կեանքում, Երկի մոլոր, խորունկ ծովում, Անորդր լինի, թէ փոթորիկ, Այս հեռուտը մայր ցամաքում Քեզ մեզ յիշում, իմ հայրենիք:

Հայրորդի Յուլիս 2017